

## ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏԵՐ

Փորձած խաղողի աստի՝ շինել:

ՈՂԿՈՅՁՆԵՐՈՒՆ վրայ որչափ որ փտտած հատեր կան՝ փրցու, ու խալ-կինով մը կրակի վրայ դիր, վեց եօթը վայրկեանի չափ եփէ. ետքը մաղի մէջ լեցուր ու ձեռքով կամ փայտէ դգալով ձգմէ որ մաղին ծակերէն անցնի. միայն թէ երբեմն երբեմն մաղին ծակերը փայտի շիւղով մը բաց որ ձգմամբ խաղողիդ հիւթը դիւրաւ անցնի, և միայն խաղողին կուտերն ու կաշին բոլորովին փտտած չըլլալով՝ չկարենան անցնիլ: Ան մաղէ անցած հիւթը նորէն մաղմաղ կրակի վրայ դիր ու եփէ ինչուան որ աղէկ մը թանձրանայ, ու եփելու ատեն երբեմն երբեմն դգալով մը խառնէ:

Ա բանս դիտելու է որ խաղողը չորցած չըլլայ, հապա միայն փտտած կամ թուռած. և ձերմակ ու սև խաղողը կրնան մէկտեղ խառնուիլ: Ուրիշ ուռիերուն պէս պտուղներ պէտք է խառնել ասոր մէջ. բայց միայն կրնայ դրուիլ գինձ՝ ու լեմոնի կամ նարնջի բարակ կեղև՝ համալու համար: Ա կերպով շինուած ուռիը թանձր կ'ըլլայ, բայց շատ համով ու անուշ, անանկ որ ուտողը կարծէ թէ մէջը շաքար կամ մեղր դրեր են:

Թուխով վաշ ձերմիցնել:

ՈՒՇԻ ԹԵՐԸ կամ գերձանը սովորաբար մոխիրով կը ձերմըկցընեն. բայց փորձեր են որ եթէ աղէկ մը եփես վուշը ածուխի փոշիով, ու ետքը լուանաս ու չորցընես, շատ աւելի աղէկ կը ձերմըկնայ: Հազար օխայ թել ձերմիցընելու համար քսանը-հինգ տրամ ածուխի փոշի բաւական է:

1 Փէմէլ:

2 Քիշիլ:

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գիշակի Խաղողներ:

ԳԻՇԱԿԵՐ կ'ըսուին ան թուռնները, որ ուրիշ կենդանիներ կ'որսան ու անոնց մտովը կ'ապրին. իրենց կըտուցովը կը պատուեն զանոնք, երբեմն ալ ճանկով բռնած՝ կը տանին: Սմանք միայն կենդանեաց մարմինները ուտելով կ'ապրին, ոմանք ալ իրենց ուղած կենդանիները բռնելով՝ նախ արիւննին կը ծծեն, ետքը անոնց մարմինը կ'ուտեն: Շատը կան որ խիստ բարձր կը թռչին, բայց աչուրնուն սրուածքը գետնին երեսը քալող կենդանուոյն ինչուան պզտի շարժմունքներն ալ կը տեսնեն. հոտառութիւննին ալ շատ սուր է: Իսկ գիշերայինները այնպիսի աչք մը ունին որ քիչ մը լոյսն ալ բաւական է իրենց համար որսերնին տեսնելու, և ընդհանրապէս շատ լոյսը աչուրնուննեղութիւն կուտայ: Գիշակերներուն շատը մինակութիւն կը սիրեն, ու ինչուան իրենց ընկերներէն ալ հեռու կը կենան: Խիստ քիչը կան որ իրենց բոյնը ծառերու վրայ կը դնեն, հապա ընդհանրապէս չմտենալու ժայռերու ու բարձր աշտարակներու վրայ: Մէկ անգամուն ինչուան չորս հաւկիթ կ'ածեն: Չաղերը՝ ի սկզբան աղուամաղ մը կ'ունենան վրանին, և մօրերնուն բերած կերակուրը իրենք իրենցմէ կ'ուտեն: Լագերը արուններէն աւելի խոշոր են: Չայներնին ընդհանրապէս անախորժ ու սուր է: Երաւ է որ աս գիշակեր թուռնները շատ անգամ մեծամեծ վնասներ կ'ընեն մարդուս, որովհետեւ ուտելու կենդանեաց ու անասնոց վրայ կը յարձըկին ու կը սպաննեն. բայց ոմանք ալ շատ օգտակար են մարդուս, ինչու որ մեռած անասնոց